



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 1168-ՎԻ «21» հունվար 2022 թ.

ԵՐԵՎԱՆԻ «ԳԱՅԻ (ՀԱՅԿ ԲԺՇԿՅԱՆՑ) ԱՆՎԱՆ Հ. 129 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ
ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏԱՐՐԱԿԱՆ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐՈՎ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԱՄԱԿԱԶՄԻ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՏԵՂԵՐԻ ԹՎԵՐԸ
ՓՈՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅՄԲԵՐԻ 10-Ի N 883-Ա/Ք, ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ
ԱՊՐԻԼԻ 23-Ի N 448-Ա/Ք ՀՐԱՄԱՆՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ
հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հուլիսի 9-ի N
808-Ն որոշմամբ հաստատված հավելվածներ N N 3-ի և 5-ի 3-րդ և 8-րդ կետերի պահանջներով,

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Երևանի «Գայի (Հայկ Բժշկյանց) անվան հ. 129 հիմնական դպրոց» պետական ոչ
առևտրային կազմակերպության տարրական հանրակրթական ծրագրով սովորողների
համակազմի սահմանային 120 տեղերի թիվը ավելացնել 30-ով և Հայաստանի
Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2013 թվականի ապրիլի 23-ի
«Հայաստանի Հանրապետության թվով 8 հանրակրթական ծրագրեր իրականացնող

պետական ոչ առևտրային կազմակերպություններին տարրական հանրակրթական ծրագրով գործունեության լիցենզիաներ տալու մասին» N 448-Ա/Ք հրամանի 1-ին կետի 2-րդ ենթակետում՝ «120» թիվը փոխարինել «150» թվով:

2. Երևանի «Գայի (Հայկ Բժշկյանց) անվան հ. 129 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության հիմնական հանրակրթական ծրագրով սովորողների համակազմի սահմանային՝ 260 տեղերի թիվը պակասեցնել 30-ով և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2006 թվականի նոյեմբերի 10-ի «Երևանի Գայի /Հայկ Բժշկյանց/ անվան հ. 129 հիմնական դպրոց պետական ոչ առևտրային կազմակերպությանը հիմնական ընդհանուր կրթական ծրագրով գործունեության լիցենզիա տալու մասին» N 883-Ա/Ք հրամանում՝ «260» թիվը փոխարինել «230» թվով:
3. Սույն հրամանի կատարման կազմակերպումը հանձնարարել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության լիցենզավորման գործակալության պետ Ա. Արշակյանին:
4. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Ժ. Անդրեասյանին:

X 
ԿԱՅՐԱՄ ՂՈՒՄԱՆՅԱՆ

Signed by: DUMANYAN VAHRAM 1909620211

